ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «01» օգոստոսի, 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 19-Ա/Ք

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 05-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 25-ի N 03-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2023 թ. հուլիսի 31-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 13-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկերը հաստատելու մասին» N 05-Ա/Ք հրամանի հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

1) հավելված N 1-ում գիտական միջոցառումների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

14	«Էլեկտրոնների, պոզիտրոնների, նեյտրոնների և ռենտգենյան ճառագայթների ցրումը արտաքին ազդակների առկայությամբ» միջազգային գիտաժողով և «Ռելատիվիստական էլեկտրոնների ճառագայթումը պարբերական կառուցվածքներում» միջազգային սիմպոզիում	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
15	«Նոր զարգացող միտումները քիմիայում» (NewTrendsChem - 2023) միջազգային գիտաժողով	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
16	«CHEP - Yerevan - 2023» Բարձր էներգիաների ֆիզիկայի կոնֆերանս	«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
17	«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» 9-րդ միջազգային գիտաժողով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
18	«Համակենտրոնացման ճամբարները Հայոց ցեղասպանության տարիներին. ճանապարհ դեպի մահ» կոնֆերանս	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրան
19	Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում. միտումներ և զարգացումներ	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ

20	«Վերաիմաստավորելով Թուրքիան 100 տարի անց. փոխակերպումները և շարունակականությունը ներքին ու արտաքին քաղաքականության մեջ» միջազգային գիտաժողով	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ
21	Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի 100-ամյակին	ՀՀ ԳԱԱ «Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ
22	«Արամ Խաչատրյան - 120» միջազգային գիտական կոնֆերանս	ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ

2) հավելված N 2-ում երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

4	«Արագացուցչային ֆիզիկայի կիրառական դասընթաց» հայ-գերմանական համատեղ դպրոց	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
5	Գ.Ա. Ասկարյանի անվան երիտասարդ գիտնականների դպրոց	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
6	Գերբարձր լուծաչափի հեռազննումը, կիրառման ուղղությունները և առանձնահատկությունները Գ. Տեփանոսյանի հիշատակին նվիրված 2-րդ երիտասարդական աշնանային դպրոց	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ